Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2024թ. հուլիսի 26

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ
Օլգա Գևորգյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Դավիթ Խաչատրյան	նախարարի տեղակալ
Տաթևիկ Ստեփանյան	նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	նախարարի տեղակալ
Զարուհի Մանուչարյան	մամուլի քարտուղար

Բացակայում էին՝

Նելի Դռնոյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Անի Գաբրիելյան	«Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն
Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Նվարդ Փիլիպոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Միրա Անտոնյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն

Մարուսյա Ճաղարյան ֆիզիկական անձ

Հայկուհի Թովմասյան ֆիզիկական անձ

Տաթևիկ Կարապետյան ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2025թ. բյուջեի հայտի ներկայացում**

   (Ներկայացնող՝ Նախարար, նախարարի տեղակալներ)

2. **Հարց ու պատասխան. քննարկում**

- Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ, անհատներ)
- ԱՍՀ նախարար- Նարեկ Մկրտչյան
- ԱՍՀ նախարարի տեղակալ- Տաթևիկ Ստեփանյան
- ԱՍՀ նախարարի տեղակալ- Դավիթ Խաչատրյան
- ԱՍՀ նախարարի տեղակալ- Աննա Ժամակոչյան
- ԱՍՀ նախարարի տեղակալ- Ռուբեն Սարգսյան
- ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության պետ –Սվետլանա Հովակիմյան
- ԱՍՀՆ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ -Արմեն Մնացականյան
- Մամուլի քարտուղար- Զարուհի Մանուչարյան

1. Մինչ Խորհրդի նիստի հարցերին անդրադառնալը՝ Խորհրդի Նախագահը ողջունեց Խորհրդի անդամներին և առաջարկեց տեղակալների կողմից ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ 2025 թ. բյուջեի հայտի վերաբերյալ:

Հաջորդիվ նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը տեղեկացրեց **հավասար հնարավորությունների ապահովման ոլորտում** իրականացվելիք բարեփոխումների

վերաբերյալ: Նախարարի տեղակալն անդրադարձ կատարեց նաև տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի ոլորտում սահմանված գերակայություններին՝ կարևորելով խնամքի ծառայությունների պատվիրակման, աջակցող միջոցների տրամադրման ծառայությունների բարելավման, փոքր տների ընդլայման և մի շարք այլ ուղղություններով իրականացվելիք գործընթացները:

Նախարարի տեղակալը հավելեց, որ վերոնշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ուղղվելու են գործող ծառայությունների ընդլայնմանն ու որակի բարելավմանը, նոր ծառայությունների ներդրմանը և մի շարք այլ նախաձեռնությունների իրագործմանը:

Նախարարի տեղակալ Դ. Խաչատրյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն **ժողովրդագրության և կենսաթոշակային ապահովության ոլորտներում** կատարված աշխատանքների վերաբերյալ՝ անդրադառնալով նաև աշխատանքային ստաժի հաշվարկման, կենսաթոշակի նոր տեսակի սահմանման, կենսաթոշակների բարձրացման, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման, ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների փոխհատուցման ծրագրերում նախատեսվելիք փոփոխությունների, ժողովրդագրության ռազմավարությամբ սահմանված միջոցառումների իրականացմանն ու մի շարք այլ ուղղություններով կատարված աշխատանքներին:

Անդրադառնալով ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի իրականացմանը՝ նախարարի տեղակալը նշեց, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացով պայմանավորված՝ 2025թ. դիմելիության ցուցանիշը կբարձրանա և բնակարանների գնման գործընթացը կընթանա առավել մեծ տեմպով:

Նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանն անդրադարձավ **սոցիալական աջակցության ոլորտում** նախատեսվող բարեփոխումներին, մասնավորապես՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդման, սոցիալական բնակարանների վերանորոգման, ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցության տրամադրման հարցերին, ինչպես նաև 2025թ-ին իրականացվելիք ծրագրերին և միջոցառումներին: Նոր միջոցառումներ են նախատեսվում նաև կյանքի դժվարին

իրավիճակում հայտնված ընտանիքներում կրթությունից դուրս մնացած երեխաների՝ դպրոց վերադառնալու, ինչպես նաև անապահով ընտանիքներում երեխա ծնվելու դեպքերում:

Նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանը, անդրադառնալով **աշխատանքի և զբաղվածության ոլորտում** իրականացված աշխատանքներին, համառոտ տեղեկատվություն ներկայացրեց ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագրերում ընդգրկելու, սոցիալական փաթեթի հատկացման կարգում նախատեսվող փոփոխությունների, պատերազմական գործողություններում զոհ ունեցած ընտանիքներին դայակի ծառայությունների տրամադրման պետական աջակցության ծրագրի վերաբերյալ:

Այնուհետև նիստի մասնակիցները բարձրացրեցին մի շարք հարցեր՝ կապված խնամքի շուրջօրյա ծառայությունների, տնային խնամքի ծառայությունից օգտվող շահառուների շրջանակի, սպասարկող անձանց թվաքանկի, ինչպես նաև փոքր տների թվի ավելացման գործընթացների առնչությամբ:

Հնչեցված հարցերին ի պատասխան՝ Նախարարը խոսեց ՊՈԱԿ-ներում խնամվող շահառուների համար արժանապատիվ միջավայր ստեղծելուն ուղղված աշխատանքների իրականացման մասին:

Տնային խնամքի ծառայությունից օգտվող շահառուների շրջանակի, սպասարկվող անձանց թվաքանակի հարցին ի պատասխան՝ նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը պարզաբանեց, որ տրամադրվող խնամքի ծավալը նախատեսվում է ընդլայնել՝ անդրադառնալով նաև հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների նախատեսվող առանձնահատկություններին:

Անդրադառնալով փոքր տների ընդլայման գործընթացին՝ նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը նշեց, որ երկու խմբային տները վերակառուցվում են պետական միջոցների հաշվին. դրանք կլինեն հարմարեցված շահառու խմբերի համար, կնախատեսեն ակտիվ ու հագեցած զբաղվածություն, արժանապատիվ միջավայր:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և մասնակցության համար: Անդրադառնալով նիստերի անցկացման ընթակարգային հարցերին՝ Նախարարը տեղեկացրեց նաև, որ սահմանված կարգի համաձայն՝ նիստերին երեք անգամ բացակայող խորհրդի անդամները կստանան

ծանուցում՝ անհարգելի բացակայության հիմքով իրենց լիազորությունները դադարեցնելու մասին:

Նախարարը հավելեց, որ գործընթացից հետո կհաստատվի խորհրդի անդամների նոր կազմ, որը, ըստ անհրաժեշտության, կհամալրվի նոր անդամներով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Recoverable Signature

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝ Ա. Խաչատրյանը